



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

<< ----->> << ----->> 2019թ.

N -----

Politik.am-ի լրագրող
Մարիամ Սարգսյանին

Հարգելի տիկին Սարգսյան

Ի պատասխան Ձեր ՀՀ Արմավիրի մարզպետարան հասցեագրած 07.02.2019 թվականի գրության տեղեկացվում է, որ ՀՀ Արմավիրի մարզի «Ֆերիկի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության գործունեության վերահսկողություն իրականացնելու նպատակով ՀՀ Արմավիրի մարզպետի կարգադրությամբ ստեղծված աշխատանքային խումբը սեպտեմբեր ամսվա ընթացքում դպրոցում ուսումնասիրել է նշված ժամանակահատվածում դպրոցի տնօրենի գործողությունների վերաբերյալ մի խումբ քաղաքացիների դիմում-բողոքի մեջ նշված փաստարկների հավաստիությունը, որի մասին աշխատանքային խմբի ղեկավարի կողմից պարբերաբար զեկուցվել է նախկին մարզպետին: Աշխատանքային խումբը մարզպետի և դպրոցի տնօրենի հետ քննարկել է արձանագրված խախտումները և բացթողումները, որոնք կապված են եղել աշխատաժամանակի, նոր ուսումնական տարվա գործընթացի կազմակերպման համար պահանջվող փաստաթղթերի, առանձին աշխատողների անձնական գործերի և որոշ ֆինանսական փաստաթղթերի վարման թերությունների հետ:

Դպրոցի տնօրենին հանձնարարվել է վերացնել թերությունները և այսուհետ դպրոցի աշխատանքները և ուսումնական գործընթացը կազմակերպել՝ բացառելով սահմանված կարգերի խախտումները:

19.02.2019

X

VERIFIED OCSP 19.02.2019 17:29:45 GMT+4

Հարգանքով՝ Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

Հ.Մաթևոսյան

Կատ.' Ս. Բուդաղյան
Հեռ.' 0237/22035